# népszámlálás 2011

# Հարցաշար Բնակարանի վերաբերյալ

Անձնական տվյալների ներկայացումը ըստ 2009 թվականի CXXXXIX օրենքի համաձայն պարտադիր է Հատկացված տվյալները ծառայում են բացառապես վիճակագրական նպատակներին

Կենտրոնական Վիճակագրության Բաժին

KSH

**Հարգելի' տիկնայք եւ պարոնայք**

2009 թվականի CXXXXIX օրենքի համաձայն 2011 թվականի հոկտեմբերին Հունգարիայի տարածքում պետք է տեղի ունենա մարդահամար: Այս օրենքի համաձայն, անձնական տվյալների տեղեկացումը պարտադիր բնույթ է կրում բոլոր անձերի համար: Տվյալների հավաքումը Կենտրոնական Վիճակագրության Բաժնի եւ քաղաքապետարանների վերահսկող մասնագետների հանձնարարականն է :
Խնդրում ենք պարտավորվեք լրացնել հարցաթերթիկը

Նախ եւ առաջ պատասխանեք **Բնակարանի վերաբերյալ հարցաշարին**, ապա լրացրեք Ձեր բնակարանում ապրող անձերի քանակին համապատասխան **Անձնական Հարցաթերթիկը**: Նշեք նախապես տպագրված հասցեի բնակարանի եւ այնտեղ ապրող անհատների տվյալների մասին:

**Անձնական Հարցաթերթիկը** պետք է լրացնել

- Հունգարացի եւ արտասահմանցի բոլոր այն քաղաքացիները, որոնք իրենց ամենօրյա կյանքը ապրում են բնակարանում, որոնք ունեն կամ չունեն գրանցում տվյալ բնակարանում, որոնք սովորաբար գիշերային հանգիստը այստեղ են անցկացնում, շաբաթվա մեծ մասը այդտեղ են ժամանակն անցկացնում, այստեղից են գնում դպրոց, աշխատանքի (նույնիսկ այն դեպքում, եթե ժամանակավորապես հեռու են գտնվում օր. բուժումների, արձակուրդային հանգստի կամ բարեկամներին այցելելու նպատակով)
- գայն մարդկանց համար, որոնք նշված բնակարանի մշտական բնակիչ են, սակայն ժամանակավորապես ապրում են ուսումնական հանրակացարաններում, աշխատանքային հանրակացարաններում, վարձով եւ այլն, եւ որոշ ժամանակամիջոցում հետ են վերադառնում բնակարան օր. շաբաթը, երկու շաբաթը կամ ամիսը մեկ անգամ

·ժամանակավորապես արտասահմանում գտնվողները, որոնց բացակայությունը չի անցնում 12 ամիսը: Տվյալները 2011 թվականի հոկտեմբերի 1ին շաբաթ օրը ժամը 12ի դրությամբ պետք է ամբողջովին լրացված լինեն եւ հանձնվեն :

Բնակարանին վերաբերող հարցերը լրացնում է բնակարանում ապրող չափահաս անձը, եւ հնարավորության դեպքում անձնաթերթիկի հարցերին պետք է պատասխանի այն անձը ում վերաբերում է այն: Երեխաների տվյալները լրացնում են ծնողները:

Հարցերին ընդհանրապես 1 պատասխան պետք է տրվի: Որտեղ կան առաջադրված հարցերի պատասխանների մեկից ավելի ընտրություն նշվում է հարցաթերթիկում:

Հարցերի պատասխանները պետք է նշվեն 3 ձեւով ☒ նշանով, վանդակի մեջ թվերով կամ գրավոր բացատրությամբ:

Մեկ վանդակի մեջ լրացրեք մեկ թիվ օր. 1 9 7 6

Թվերը աջից ձախ պետք է լրացվեն վանդակի մեջ, ամսաթիվը նշել արաբական թվով օր. 4

Գրավոր պատասխանը միշտ սպիտակ ուղղանկյունաձեւ տարածքի մեջ պետք է գրվի Budapest, 13. ker.

Սխալ նշելու դեպքում ☒ նշանի վրա գիծ քաշել, իսկ սխալմամբ գրված թիվը նորից նույն կերպ ջնջել եւ ճիշտ թիվը գրել անմիջապես ջնջված թվին մոտ գտնվող վանդակում:

Խնդրում ենք կից գտնվող վանդակների մեջ տառեր չգրել. Հարցաթերթիկը պետք է լրացվի սեւ ու կապույտ գրիչով ընթեռնելի ձեռագրով:

Կանխավ շնորհակալություն ենք հայտնում Ձեր համագործակցության եւ հարցերին պատասխանելու համար:

Դոկտոր Վուկովիչ Գաբրիելլա
ԿՍԲ Ղեկավար

## Բնակարանի հասցե

Ինքնությունը (անուն ազգանուն) ☐ Էլեկտրոնային հասցե ☐ –

**Ճիշտ է արդյոք նախկինում լրացված հասցեն?** Այո ☒ Ոչ ☒ → **Խնդրում ենք ուղղեք նախկինում սխալ տրված հասցեի տվյալները**

Բնակավայր (քաղաք, գյուղ) Բուդապեշտի թաղամաս

Բնակվելու վայրը

Բնակավայր (փողոց, պողոտա, հրապարակ եւ այլն)

Բնակարանի համարը | տան համարը | նախագծային համարը | շենք | շքամուտք,նրբանցք հարկ | դուռ

## I. Բնակարանի տվյալները

**1. Բնակարանի ձեւը**

- Առանձնատուն, բաղկացած 1-3 բնակարաններից ☒
- Բնակելի շենք կազմված 4 կամ 4ից ավել բնակարաններից ☒
- Հանգստյան տուն ☒
- Ոչ բնակելի շենք (օր. դպրոց, գրասենյակ, գործարան) ☒

**2. Ինչպիսին է բնակարանի շրջակայքը ?**

- Բնակելի շենք ( սեփական տուն) ☒
- Հանգստավայր ☒
- Այլ ( օր. խանութներ, շարժական տնակներ) ☒

**3. Երբ է կառուցվել բնակարանը?**

- 1919 ից առաջ ☒
- 1919–1945 ☒
- 1946–1960 ☒
- 1961–1970 ☒
- 1971–1980 ☒
- 1981–1990 ☒
- 1991–2000 ☒
- 2001–2005 ☒
- 2006- թ կամ հետո ☒
- չգիտեք ☒

**4. Ինչից է կառուցված բնակարանը?**

- Աղյուսից , ծեռքով առանձին մասերից հավաքած, ...............
- Միջին կամ մեծ աղյուսներից բաղկացած կտորներից, լցոնված բետոնի ....................................
- Պանելից ................................
- Փայտից.................................
- Կավի աղյուսից, ցեխից եւ այլն,(պատը հիմնքարով) .........
- Կավի աղյուսից, ցեխից եւ այլն (պատը առանց հիմանքարի)........
- Այլ ............................................
- Չգիտեք ...................................

**5. Ինչպես եք օգտագործում բնակարանը**

- Մշտական բնակության վայր, ժամանակավոր ապրելու վայր, որպես կացարան ..........................................................
- Միայն, երբեմն կամ ոչ միշտ ..........................................................
- Այլ նպատակով որպես (գրասենյակ կամ բժշկի ընդունարան) .....
- Դատարկ բնակարան, բնակարանում չկա ապրող .......................

**6. Ում է պատկանում բնակարանը**

- Անհատ(ներին) ..........................................................
- Քաղաքապետարանին կամ գյուղապետարանին..........................
- Այլ հաստատության, կազմակերպություններին (հիմնարկություն, եկեղեցի) ..........................................

**7. Բնակարանում կա**

Սենյակ, ննջասենյակ, ճաշասենյակ, հյուրասենյակ, Տարբեր նպատակներով օգտագործման տարածքները բաժանեք հետեւյալ ձեւով (օր. ամերիկական խոհանոցը նշեք եւ որպես խոհանոց եք որպես սենյակ): Խնդրում ենք նշեք նաեւ ՉԿԱ պատասխանը

- **7.1.** Սենյակ ( 12 եւ ավելի քառակուսի մետր) — հատ — չկա .....
- **7.2.** Սենյակ ( մինչեւ 12 քառակուսի մետր — հատ — չկա .....
- **7.3.** Խոհանոց ( 4 քառակուսի մետրանոց կամ ավելի) — կա.... — չկա .....
- **7.4.** Խոհանոց ( մինչեւ 4 քառակուսի մետր ) — կա.... — չկա .....
- **7.5.** Բաղնիք — հատ — չկա .....
- **7.6.** Ջրահեռացման կոյուղի բաղնիքում կամ առանձին — հատ — չկա .....
- **7.7.** Այլ տարածքներ օր. նախասենյակ, միջանցք, մառան — կա.... — չկա .....

**8. Ինչքան է բնակտարածքը քառակուսի մետրով**

մ²

Դրա մեջ մի հաշվեք նկուղը, վերնահարկը, ավտոտնակը,բաց պատշգամբը

**9. Էլեկտրականությամբ ապահովված է Ձեր բնակարանը?**

Այո...   Ոչ....

**10. Ինչով է ապահովված բնակարանը**

**10.1.** Ջրամատակարարումը?

- Ջրամատակարարումը ցանցային , ընդհանուր ջրմուղային խողովակներով ..........................................
- Տնական ջրային խողովակով օր. ջրհորից պոմպ .....................
- Բնակարանում ջրամատակարարում չկա ................................

**10.2. Ինչպես է մատակարարվում տաք ջուրը**

- Կենտրոնական ջրախողովակով..........................................
- Այլ ( օր. կենտրոնական կամ էլեկտրական ջրատաքացուցիչով, գազի բոյլեռով, խոհանոցի ջրատաքացուցիչով)..............................
- Տաք ջուր չկա ...........................................

**11. Ինչպես են հեռացվում կոյուղաջրերը բնակարանից**

- Կենտրոնական ջրահեռացման կոյուղագծերով .........................
- Լցվում է տնական ջրահորերի մեջ (փակ կոյուղի, փոսի, տարրայի մեջ) ...............................................
- Այլ տեղեր կամ չկա ջրահեռացման կոյուղի..........................

**12. Ջեռուցումն ինչպես է ապահոված**

- Առանձին կոնվեկտորով, վառարանով.................
- Մի կամ մի քանի բնակարանի կենտրոնական ջեռուցիչով ..........................................
- Կաթսա, այլ միջոցներով ..................................
- Չկա ջեռուցման հնարավորություն ........................

} 14. Հարց

**13. Ջեռուցումն ինչ վառելանյութերով եք ապահովում**

- Կենտրոնական ցանցի գազային խողովակով ............................
- ՊԲ գազի բաք ..........................................................
- ՊԲ գազի բալոն ..........................................................
- Փայտով.........................................................................
- Ածուխով ........................................................................
- Էլեկտրականությամբ.......................................................
- Վառելայուղով ..................................................................
- Ժամանակակից ջեռուցման միջոցներով (արեւային կամ հողային էներգիայով) .......................................................
- Այլ նյութերով, այսինքն

**14. Բնակարանում քանի անձ է բնակվում եւ քանի ընտանիք**

- Մեկ ..............................................
- Ավելի քան մեկ .......... այլ
- Ոչ ոք չի ապրում բնակարանում

Ընտանիքում ապրող անձերը նրանք են, ովքեր իրենց ուտելիքը, օրվա ծախսերը միասին են մուծում

# II. Բնակարանում ապրող անձերի թիվը

(մի անձը միայն մի անգամ պիտի նշվի)

**15.1. Բնակարանում ապրող անձանց թիվը:**
(Բնակարանում հաշվառեք այն անձանց , որոնք գիշերային հանգիստը այստեղ են անցկանում, այստեղից են գնում դպրոց, աշխատանքի եւ այլն)

Հոգի — Չկա այդպիսի անձ

**15.2. Ժամանակավորապես արտասահմանում գտնվողների թիվը:**
(Բնակարանում պետք է նշել նաեւ այն անձանց անունները, որոնք ներկա դրությամբ ապրում են արտասահմանում եւ նախատեսվում է, որ 12 ամիս կլինեն դրսում)

Հոգի — Չկա այդպիսի անձ

**15.3. Այստեղ ի նկատի ունենք այն անձանց, ում մշտական գրանցումը այս հասցեում է, բայց ուսման կամ աշխատանքի պատճառով:**
(օր. հանրակացարան, աշխատանքային հանրակացարան, վարձով են ապրում) շաբաթը մեկ կամ երկու, շաբաթը մեկ հետ են վերադառնում բնակարան:)

Հոգի — Չկա այդպիսի անձ

Այնուհետեւ լրացրեք այնքան անձերին վերաբերող հարցաթերթիկ, որքան անձ Դուք արդեն նշել եք 15.1, 15.2, 15.3 հարցերում:

**16. Արտասահմանում մշտական ապրողների թիվը:**
(Այստեղ նկատի ունենք այն անձանց, ովքեր մշտական գրանցում ունեն այս հասցեում է, բայց ներկա դրությամբ ապրում են արտասահմանում կամ երկրից բացակայել են արդեն 12 ամիս կամ նախատեսվում է, որ 12 ամիս կլինի դրսում:)

Հոգի — Չկա այդպիսի անձ

Այդ անձանց անձնական հարցաթերթիկ պետք չէ լրացնել!

# Բացատրագիր

## Մարդահամարի հարցաթերթիկը լրացնելու համար

Բացատրության մեջ ներկայացրել ենք այն հարցերը որոնք առօրեական են, սակայն կան նաեւ ավելի բարդ հարցեր, որոնք մանրամասն բացատրության կարիք ունեն: Եթե ունեք ավելի շատ տեղեկացվելու կարիք, կարող եք օգտվել www.nepszamlalas.hu ինտերնետային կայքից:

### Բնակարանի հարցաթերթիկ լրացնելը

**2րդ հարցի բացատրություն:** Հանգստյան տեղի եւ բնակարանային այլ հարցերի պատասխանները - 2011թ հոկտեմբերից սկսած գոնե 1 անձ բնակվում է այդ հասցեում: Այդ դեպքում հետագա հարցերի պատասխանները վերաբերելու են հանգստյան կամ բնակարանային այլ հարցերի:

**6րդ հարցի բացատրություն:** Եթե բնակարանը որեւէ հաստատություն է, կազմակերպություն կամ կոոպերատիվ, ապա հարցաթերթիկում պետք է լրացվեն բնակարանի ամենաշատ բաժնետոմս ունեցող անձի տվյալները:

**7րդ հարցի բացատրություն:** Բնակարանում գտնվող զուգարանը եւ բաղնիքը պետք է հաշվվեն միասին որպես մեկ տարածք:

**8րդ հարցի բացատրություն**: Եթե բնակարանի ընդհանուր տարածքը չգիտեք, թե կոնկրետ որքան է, ապա գրեք մոտավոր չափը: Փակ եւ բաց պատշգամբները, փակ վերանդան հաշվեք կես քառակուսի մետրով, իսկ վերնահարկը պետք է հաշվել 1մ 98սմ-ից սկսած:

**9րդ հարցի բացատրություն:** Ոչ պատասխանը այն դեպքում պետք է նշել, եթե բնակարանում բացակայում են էլեկտրական լարերը: Եթե հոսանքն անջատված է, ( օրինակ վարձը չմուծվելու պատճառով), բնակարանը, միեւնույնն է, համարվում է որպես էլեկտրականությամբ ապահովված բանակարան:

**12րդ հարցի բացատրություն:** Եթե բնակարանը տարբեր միջոցներով եք տաքացնում, ապա թվարկեք տաքացման միջոցները ըստ սենյակների: Եթե կոնկրետ պատասխան չեք կարող տալ, ապա նշեք ամենահաճախ օգտագործման ջեռուցման միջոցը:

**14րդ հարցի բացատրություն:** Եթե բնակարանում կա վարձակալող եւ նա ունի ընտանիք, ապա նա համարվում է առանձին ընտանիք:

**15րդ հարցի բացատրություն:** Այն անձանց եւս հաշվառեք բնակարանում, որոնք ժամանակավորապես հեռու են գտնվում օր. բուժման, հանգստյան կամ բարեկամներին այցելելու պատճառով:

**16րդ հարցի բացատրություն:** Բնակարանում պետք է նշել նաեւ այն անձանց, որոնք ներկա դրությամբ ապրում են արտասահմանում կամ բացակայել են արդեն 12 ամիս կամ նախատեսվում է, որ 12 ամիս կլինեն դրսում, անկախ նրանից, թե այդ ընթացքում ժամանակավորապես ետ կվերադառնան, թե ոչ: Վերը նշված անձանց համար անձնական հարցաթերթիկը լրացնել պարտադիր չէ:

### Անձնական թերթիկի լրացման կարգը

**7րդ հարցի բացատրություն:** Եթե բնակարանի հարցաթերթիկում նշված հասցեներից բացի ուրիշ տեղ եւս ունեք բնակության հասցե, համապատասխան պատասխանի կողքին, վանդակի մեջ, նշեք նաեւ բնակավայրի անունը, իսկ Բուդապեշտի դեպքում թաղամասը:

**10րդ հարցի բացատրություն:** Իրավաբանորեն եթե Դուք դեռ բաժանված չեք, այդ դեպքում եւս պետք է նշել ամուսնացած լինելու կարգավիճակը, նույնիսկ եթե առանձին եք ապրում միմյանցից, բայց օրենքով դեռ բաժանված չեք:

**11.2րդ հարցի բացատրություն:** Այո պատասխան պետք է նշել այն դեպքում եւս, եթե ամուսնու կամ կնոջ հետ նույն բնակարանում չեք ապրում, սակայն ամուսնությունը պահպանում եք: Ոչ պատասխանը պետք է նշեք այն դեպքում, եթե ամուսնությունը քայքայվել է, անկախ նրանից նույն թե այլ բնակարանում եք ապրում:

**12րդ հարցի բացատրություն:** Այն անձիք են կոչվում ոչ քաղաքացիական ամուսիններ, որոնք օրենքով ամուսնացած չեն եւ վարում են շարունակական ամուսնական կյանք , անկախ ընտանեկան կարգավիճակից եւ անկախ նրանից, թե զույգի հետ միասին, թե առանձին բնակարանում են ապրում: Հարցը վերաբերում է նրանց , ովքեր գրանցված են կամ հաշվառման մեջ են վերցված, եւ կամ էլ հաշվառման մեջ չվերցված քաղաքացիական ամուսիններ են:

**14րդ հարցի բացատրություն:** Եթե շատ պատասխանների հնարավորություններ ունեք, ապա նշեք ամենաառաջինը: Այն անձերն են համարվում ամուսին եւ կին, որոնք միասնական ընտանեկան կյանք են վարում օրինական ամուսնությամբ: Ոչ քաղաքացիական ամուսինների պատասխանն այն ժամանակ նշիր, երբ ոչ քաղաքացիական ամուսինը նույն տանն է բնակվում անկախ նրանից գրանցված է թե ոչ, հաշվառման մեջ կա թե ոչ:

Միայնակ ծնող է համարվում նա, ով առանց ամուսնական զույգի ապրում է երեխայի հետ: Երեխա ենք անվանում անձին, ի նկատի չունենալով տարիքը, (անկախ ընտանեկան կարգավիճակից եւ անկախ նանից, թե ծնողները միասին են ապրում, թե առանձին): Եթե ընտանիքում չի ապրում ծնողներից մեկը կամ ոչ քաղաքացիական ամուսնությունից է սերված այդ անձը, ապա միեւնույնն է, երեխա է կոչվում, նույնիսկ եթե որդեգրված է կամ խնամակալված:

Մոտիկ բարեկամ կոչվում են այն անհատները, որոնք միասին են ապրում ընտանիքում, բայց ապրում են որպես ոչ ամուսնական զույգ ( հայր, մայր, տատիկ, պապիկ, ապուպապ, աներ, զոքանչ):

Միայնակ բնակիչ նշեք այն դեպքում, եթե ողջ ընտանիքը 1 անձից է կազմված:

**15րդ հարցի բացատրություն:** Հաշվի առեք այն երեխաներին, որոնք կենդանի են, ապրում են ուրիշ ընտանիքում, ուրիշ տեղ կամ մանկատանը, կամ տեղափոխվել են ինչ-որ տեղ, կամ էլ մահացել են: Այս հարցում պետք չէ նշել որդեգրված կամ խնամակալության տակ գտնվող երեխաներին:

**17.1 րդ հարցի բացատրություն:** Եթե միաժամանակ սովորում եք տարբեր կրթական հաստատություններում, տարբեր բաժիններում, այդ դեպքում միայն մեկ բաժինը նշեք, որն էլ ամենաբարձրն է, իսկ եթե նույն մակարդակի վրա են, ապա նշել այն հաստատությունը, որի ուսումնական տարիների քանակը ավելի երկար է:

**17.2 րդ հարցի բացատրություն:** Եթե սովորում եք ցերեկային կրթական հաստատությունում եւ դրա հետ միասին այցելում եք այլ դասընթացների, ապա նշեք ցերեկային ուսուցումը:

**18 րդ հարցի բացատրություն.** Դպրոցական ուսումնական բոլոր տարիները պետք է նշվեն, անկախ նրանից, թե ինչ կրթություն եք ստացել կամ դասընթացներ եք անցել, օր. եթե տարրական հնգամյա դպրոց եք հաճախել, ուսման տարեթիվը նշեք 4: Եթե միջնակարգ դպրոցը ավարտել եք, այդ դեպքում տարրական դպրոցի հետ նշեք նաեւ միջնակարգ դպրոցն ավարտելու տարին: Եթե սովորում եք բարձրագույն դպրոց կամ ավարտել եք այն, ապա համապատասխանաբար նշեք նաեւ միջնակարգ եւ բարձրագույն դպրոցների ավարտելու տարեթվերը:

Եթե նմանատիպ դպրոցներ եք հաճախել, ապա ուսումնական տարիների թվերը մի գումարեք իրար: Այս պարագայում նշեք այն դպրոցի անունը, որը ավելի շատ ուսումնական տարիներ ունի եւ այդ տարինեը ավարտել եք: Այն ինստիտուտներում, որտեղ կիսամյակները բալերով են հաշվվում հաշվի առեք նաեւ կրեդիտային բալերին համապատասխան տարիները:

**19 րդ հարցի բացատրություն**. Նախապես նշված հնարավորությունների մեջ տրված են նաեւ Ձեր կողմից ձեռք բերած ուսումնական հաստատության ստացած որակավորումը: Եթե չունեք ավարտական պետք է մեկ պատասխան նշեք: Մի նշեք կուրսերի դասընթացները, մասնագիտական ավարտականը եւ դիպլոմը: Արտասահմանյան երկրների վկայականը պետք է համեմատել տեղական ուսումնական հաստատությունների վկայականների հետ:

Ութամյա դպրոց համարում են այն դպրոցը, որի տեւողությունը 1-7տարի է, իսկ տարրական դպրոց համարում են այն դպրոցը, որի տեւողությունը 1-3 տարի է: Այստեղ կարող եք նշել նաեւ այն ժամանակը, եթե վեցամյա գիմնազիայում սովորել եք մեկ տարի, կամ ութամյա գիմնազիայում արդեն սովորում եք 1-3 տարի:

Միջնակարգ դպրոցի ավարտող է համարվում նա, ով ավարտել է ութերորդ դասարանը կամ տարրական դպրոցի 4 կամ 6րդ դասարանները, բայց բարձրագույն կրթություն չի ստացել: Այս խմբի մեջ մտնում են նրանք, ովքեր վեցամյա գիմնազիայում սովորում են արդեն 2-5 տարի կամ ութամյա գիմնազիայում սովորում են 4-7 տարի, կամ նրանք, ովքեր ավարտել են ուսումնարանի 1-3րդ դասարանները: Այս խմբի մեջ մտնում են նաեւ նրանք, ովքեր ավարտել են միջնակարգ դպրոցը, բայց հասունության ատեստատ չեն ստացել, բացառությամբ նրանց, ովքեր 1974-1986 թ ստացել են միջնակարգ դպրոցի ավարտական: Այստեղ պետք է նշել նաեւ նրանց անունները, ովքեր սովորել են ուսումնարանում, ավարտել են, բայց ատեստատ կամ դիպլոմ չեն ստացել:

Առանց մասնագիտության հասունության ատեստատ ունի նա, ով գիմնազիայում եւ ուսումնարանում ստացել է հասունության ատեստատ առանց մասնագիտություն ստանալու: Այս պատասխանը նշում է նա, ով 1974-1986 թ ընթացքում միջնակարգ դպրոցի ավարտական ունի:

Հասունության ատեստատով մասնագիտություն ունեցողները նրանք են, ովքեր ստացել են հասունության ատեստատ եւ մասնագիտական վկայական: Այստեղ ընդգրկվում են նաեւ ուսումնարանի, տեխնիկումի, առեւտրի բարձրագույն դպրոցի, միջնակարգ դպրոցի ուսուցչի, մանկապարտեզի դաստիարակի հաստատություններում ձեռք բերած վկայականները եւ 1949-1955 թ ձեռք բերած մասնագիտությունը:


3

Հասունության վկայական ունենալու նախապայմանը այն է, եթե ունեք միջին կամ բարձրագույն վկայական: Այս պատասխանը նշում են նաեւ նրանք, ովքեր հասունության ատեստատը, մասնագիտության վկայականը, արհեստի ուսուցումը ձեռք են բերել դպրոցում: Նման ավարտականները ձեռք են բերվել մինչեւ 2003 թ:
Բարձրագույն ակրեդիտացիա ունեցող մասնագիտական վկայական ունի նա, ով 1998ից հետո միջնակարգ դպրոցում կամ բարձրագույն դպրոցում կամ բարձրագույն կրթական հաստատություններում համապատասխան մասնագիտական փաստաթուղթ է ստացել: Այդ ավարտականի պարտադիր հիմքն է հանդիսանում հասունության վկայականը: Նրանք, ովքեր ավարտել են ինստիտուտը կամ բարձրագույն ուսումնական այլ հաստատություն (օր. ինստիտուտ, ակադեմիա, բարձրագույն տեխնիկում, բարձրագույն մասնագիտական դպրոց կամ բարձրագույն մանկավարժական հաստատություն, այնտեղից էլ ստացել են համապատասխան դիպլոմ: Այդ ուսումնական հաստատությունների մեջ մտնում են նաեւ բարձրագույն ուսումնական համակարգում միջին կարգավիճակ ունեցողները: Համալսարանի կամ դրան հավասարարժեք դիպլոմ ունեն նրանք, ովքեր բոլոր համալսարաններում կամ բարձրագույն կրթական հաստատություններում միջին կրթություն կամ լրացուցիչ մասնագիտություն են ձեռք բերում կամ մասնագիտական խորացման ուսման դիպլոմ են ստացել:
Այս կարգի մեջ մտնում են նաեւ նրանք, ովքեր ներկայում սովորում են բարձրագույն կրթական համակարգում մասնագիտական որակավորում ձեռք բերելու համար: Դոկտորի կոչում նա ունի, ով մինչեւ1990 հետազոտական աստիճան է ձեռք բերել:

**20.1-20.7 րդ հարցի բացատրություն:** Տվյալները պետք է նշվեն 19 հարցերի համար նախատեսված ամենաբարձր ուսուցման ավարտականին համապատասխան նշումներում: Նման կատեգորիաներով մեկից ավելի մասնագիտություն ունենալու դեպքում նշել բոլորը: Այն մասնագիտություններում, որտեղ ուսուցչի կամ ոչ բարձրագույնավարտ ուսուցչի մասնագիտություն է նշված, պետք է նշել բարձրագույնավարտ ուսուցիչ է, թե ոչ: Եթե ամենաբարձր դպրոցի հասունության ավարտականը ստացել եք առանց մասնագիտություն ձեռք բերելու, այդ դեպքում հարկ չկա պատասխանելու 20.3 -20.7 հարցերին:

**21 րդ հարցի բացատրություն** Հունգարերեն լեզվից բացի ամենաշատը կարող եք նշել 3 լեզու:

**23 րդ հարցի բացատրություն** Եկամուտ ունեցող աշխատանք է կոչվում այն աշխատանքը, որի դիմաց աշխատավարձ եք ստանում, որը կարող է լինել արժեթուղթի մուծման ձեւով: Այստեղ կարելի է ի նկատի ունենենալ նաեւ այն աշխատանքներն, որոնցից են ընտանիքում օգնող անդամի աշխատանքը, ոչ մշտական աշխատանքը: Այստեղ պետք չէ նշել կազմակերպությունում կամավոր կատարվող աշխատանքները, Ձեր սեփական տան մեջ կատարվող աշխատանքը օր. բնակարան կառուցելը, վերանորոգելը, պարտեզի աշխատանքները:

**24 րդ հարցի բացատրություն.** Ակտիվ աշխատաքներ փնտրելու ձեւերն են գործազուրկների կազմակերպություններում գրանցվելը, մասնավոր միջնորդի դեր ունեցող կազմակերպության միջոցով աշխատաքներ փնտրելը, անմիջապես աշխատանք տվողին փնտրելը, հայտարարությունների միջոցով աշխատաքներ փնտրելը, բարեկամներից աշխատաքների մասին հարցնելը, կոոպերատիվ աշխատանքների ձեռնարկումը:

**26 րդ հարցի բացատրություն.** Նշեք նաեւ այն տարիներն ու ամիսները, երբ օր. թոշակի եք գնացել, ֆիզարձակուրդի մեջ եք կամ երբ վերջին անգամ անընդմեջ գոնե 2-3 շաբաթ աշխատանք եք ունեցել: Եթե չեք հիշում կոնկրետ, մոտավորապես նշեք տարեթիվը: Դպրոցի արձակուրդային աշխատանքները կամ 2 շաբաթվանից քիչ աշխատանքները մի նշեք:

**27-30 հարցերում խնդրում ենք լրացնելու ժամանակ ուշադրություն դարձնել հետեւյալներին**

- Արձակուրդի կամ հիվանդ լինելու ժամանակ նշեք ներկայիս աշխատանքը, իսկ չաշխատելու դեպքում վերջին աշխատանքի պայմանները:
- Ով աշխատանք չունի ու չի էլ փնտրում, բայց առաջ աշխատել է, նա պետք է պատասխանի 27-28 հարցերին ըստ վերջին աշխատանքային տվյալների:
- Ով երբեք չի աշխատել, 27-30 հարցերին պատասխանել պետք չէ

**27 րդ հարցի բացատրություն:** Աշխատանքային զբաղմունքը, աշխատավայրը պետք է պարզ նշել, թե կոնկրետ ավարտած աշխատանքը ինչ բնույթի է: Պետք չէ նշել ընդհանուր ինչ-որ բան, այլ կոնկրետ նշեք աշխատանքի մեջ Ձեր պաշտոնը:
Ահա մի քանի օրինակներ համապատասխան աշխատանքները նշելու համար

Օրինակներ

| սխալ | Ճիշտ |
|---|---|
| սովորեցրած բանվոր | սովորեցրած պաստառագործ,սովորեցրած աշխատող, սովորեցրած դեղագործ |
| պետական համալիրում աշխատող | մանկապարտեզի դայակ, ուսուցիչ, ութամյա դպրոցի ուսուցիչ |
| մանկավարժ | ութամյա դպրոցի ուսուցիչ , միջնակարգ դպրոցի ուսուցիչ |
| բաժնի վարիչ | ֆինանսական ղեկավար, առեւտրական բաժնի ղեկավար |
| ներկայացնող | ֆինանսական պրեզենտացյա անող,ինժեներական աշխատանքներ իրականցնող, գլխավոր ներկայացնող |
| կոոպերատիվ | սեփական բեռնատար մեքենայի վարորդ, պատշար, հաշվապահ եւ այլն |
| փոստի աշխատող | փոստատար, փոստը ընդունող, նամակների դասավորող |
| վարորդ | անձնական մեքենայի վարորդ, բեռնատար մեքենայի վարորդ, |
| թոշակառու | ոստիկան եւ այլն |
| անգործ | տնական էլեկտրական գործիքների նորոգող, կրեդիտային ադմինիստրատոր |

**29 րդ հարցի բացատրություն.** Տնօրեն, ադմինիստրատոր եւ ներքին աշխատողներ նշելիս ուշադրություն դարձրեք տվյալ կազմակերպության բոլոր աշխատողներին:

**30 րդ հարցի բացատրություն.** Որպես գործատու այն կազմակերպության բիզնեսը նշեք, որտեղ իսկապես աշխատում եք (գործարանային համալիր, տարածքի տեղը, բիզնեսը, դպրոցը եւ այլն): Գործատուի անունի մոտ նշեք նրա համապատասխան պաշտոնը (օր. Կոնտրոլ ՍՊԸ տուրքերի խորհրդատու): Եթե չեք ուզում անունը նշեք, ապա մանրամասն բացատրեք, որպեսզի հեշտությամբ հասկացվի, թե ինչով եք զբաղվում եւ ինչ աշխատանք եք կատարում (օր. անասնաբուծություն, ուտելիքների արտադրություն, տպարանային աշխատանք, գազամատակարարման աշխատանք, շենքեր կառուցող, մեքենա վերանորոգող, գիրք տպագրող եւ այլն ):
Եթե հիմնարկության գործատուն Դուք ինքներդ եք, այդ դեպքում բավական է, եթե նշեք ինքնագործատու: Ով աշխատանքը ձեռք է բերել աշխատանքային բորսաների օգնությամբ, չպետք է նշի աշխատանքային միջնորդ կազմակերպության անունը, այլ միայն պետք է նշի այն տեղը, որտեղ աշխատում է:

**31 րդ հարցի բացատրություն.** Տան, բնակարանի հարցի վերաբերյալ պատասխաը նշեք այն դեպքում, եթե աշխատանքի վայրը կամ նույն դպրոցում է կամ մանկապարտեզում:
Տեղական ծառայությունները կամ նման աշխատանք անողները, բեռնատար մեքենաների վարորդները պետք է նշեն այն տեղը, որտեղից ստանում են իրենց ամենօրյա աշխատանքը (Բուդապեշտի պարագայում թաղամասը):
Եթե աշխատավայրը կամ դպրոցը, մսուրը, մանկապարտեզը եւ այլն այլ վայրում է կամ Բուդապեշտի այլ թաղամասում է կամ արտասահմանում է, ապա վանդակի մեջ նշեք բնակավայրը, արտասահմանի դեպքում տվյալ պետության անունը, որտեղ կատարվում է ամենօրյա աշխատանքը, դպրոց գնալը եւ այլն: Փոփոխական բնակավայրի պատասխանը պետք է նշի նա, ում աշխատանքը տարբեր վայրերում է (օր. շուկայի աշխատող, ապրանք ցուցադրող):

**32 րդ հարցի բացատրություն:** Տրանսպորտային միջոցներից օգտվելիս զանազան բառը այն դեպքում պետք է նշեք , եթե աշխատանքի գնալիս տարբեր տրանսպորտներից եք օգտվում (օր. աշխատանքի, դպրոց գնացքով եք գնում եւ այնտեղ քաղաքային ավտոբուսից եք օգտվում) :
Եթե անընդմեջ չեք օգտագործում նույն տրանսպորտային հնարավորությունները, կամ օգտվում եք սեփական մեքենայից կամ տեղի քաղաքային տրանսպորտից, ապա նշեք տրանսպորտի օգտվելու հիմնական միջոցը:

**34-35 րդ հարցի բացատրություն:** Եթե 2 ազգի կամ փոքրամասնության ներկայացուցիչ եք, մեկը նշեք 34ի, իսկ մյուսը 35ի պատասխանի մեջ:

**36 րդ հարցի բացատրություն:** Համրերի, դեռ խոսել չիմացող երեխաների մայրենի լեզուն նշեք այն լեզուն, որ լեզվով որ նրանց հարազատներն են խոսում իրենց հետ:

**38 րդ հարցի բացատրություն:** Կոնկրետ այն կրոնը կամ եկեղեցին նշեք, որին պատկանում եք, ընդունում եք եւ խնդրում ենք խուսափեք հապավումներից:

**39 րդ հարցի բացատրություն**:Խրոնիկական է այն հիվանդությունը, որը ներկա դրությամբ բուժելի է, բայց դեղորայքով կամ թերապիայով կարող եք վերահսկել (օր. շաքարախտ, ասթմա, բարձր ճնշում, ուռուցքային հիվանդություն, սրտային եւ երակային հիվանդություն, թոքախտ, հոդային հիվանդություններ):